ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

7 հունիսի 2016 թվականի **թիվ 67** քաղ. Մոսկվա

Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքներին ներկայացվող Միասնական անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջներում փոփոխություններ կատարելու մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 58-րդ հոդվածի 2-րդ կետին և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 2 հավելվածի 22-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի թիվ 317 որոշմամբ հաստատված՝ Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքներին ներկայացվող անասնաբուժական

(անասնաբուժասանիտարական) միասնական պահանջների թիվ 1 հավելվածի II բաժնում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո, սակայն ոչ շուտ, քան «Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների միասնական ցանկում այնպիսի ապրանքներով լրացնելու մասով փոփոխություններ կատարելու մասին, ինչպիսիք են լոբազգի բանջարեղենը և կերային հավելումները» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշումն ուժի մեջ մտնելու օրը:

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի հունիսի 7-ի
թիվ 67 որոշման

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքներին ներկայացվող անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) միասնական պահանջների թիվ 1 հավելվածի II բաժնում կատարվող

1. 39-րդ դիրքի 6-րդ վանդակում տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «ներառումը ռեեստրում չի պահանջվում, սակայն ներմուծման թույլտվության մեջ և անասնաբուժական սերտիֆիկատում պետք է նշվեն հսկողության վերցված ապրանքը շրջանառության մեջ դրած ձեռնարկության համարը և (կամ) անվանումը»:

2. 46-րդ դիրքից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ դիրքով՝

«46[1]	0708-ից, 0713-ից	Լոբազգի բանջարեղեն՝ կենդանիների կերի համար օգտագործվող[5]	անասնաբուժական սերտիֆիկատ	այո	ներառումը ռեեստրում չի պահանջվում, սակայն ներմուծման թույլտվության մեջ և անասնաբուժական սերտիֆիկատում պետք է նշվեն հսկողության վերցված ապրանքը շրջանառության մեջ դրած ձեռնարկության համարը և (կամ) անվանումը»:

3. 68-րդ դիրքից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ դիրքով՝

«68[1]	1518 00-ից, 2102-ից, 2309-ից, 2936-ից, 3002-ից, 3203 00-ից, 3302-ից, 3504 00-ից, 3507-ից, 3808-ից, 3824-ից	Կերային հավելումներ	անասնաբուժական սերտիֆիկատ կենդանական ծագման բաղադրիչներ պարունակող ապրանքների և անասնաբուժական նպատակներով, այդ թվում՝ կենդանիների կերերում օգտագործվող ապրանքների համար	այո	ներառումը ռեեստրում չի պահանջվում, սակայն ներմուծման թույլտվության մեջ և անասնաբուժական սերտիֆիկատում պետք է նշվեն հսկողության վերցված ապրանքը շրջանառության մեջ դրած ձեռնարկության համարը և (կամ) անվանումը»:

4. 94-րդ դիրքի 6-րդ վանդակում տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «ներառումը ռեեստրում չի պահանջվում, սակայն ներմուծման թույլտվության մեջ և անասնաբուժական սերտիֆիկատում պետք է նշվեն հսկողության վերցված ապրանքը շրջանառության մեջ դրած ձեռնարկության համարը և (կամ) անվանումը»:

5. 95-րդ դիրքի 4-րդ վանդակում տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «անասնաբուժական սերտիֆիկատ կենդանական ծագման բաղադրիչներ պարունակող ապրանքների և անասնաբուժական նպատակներով, այդ թվում՝ կենդանիների կերերում օգտագործվող ապրանքների համար»: